# ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՂԹԱՆԱԿԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԿԵՂԾԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ԵՐՎԱՆԴ ԴԱՍՊԱՐՅԱՆ

*ՍՄԿԿ քաղաքականության դեմ միջազգային իմպերիալիզմի ձեռնարկած գաղափարախոսական «խաչակրաց արշավանքի» գլխավոր ասպարեզներից մեկը ազգային հարցն է։ Ազգային հարցում ՍՄԿԿ քաղաքականության կեղծարարությամբ զբաղվում են նաև ժամանակակից ֆրանսիական բուրժուական պատմաբան-սոցիոլոգները։ Իրենց կեղծարարական փորձերում ֆրանսիական ռեակցիոն պատմաբանները հաճախ անդրադառնում են նախկին ռուսական կայսրության ազգային շրջաններում, մասնավորապես Անդրկովկասում, սովետական իշխանության հաստատման պատմությանը, ընդ որում, միանգամայն արդիական գործնական նպատակներով։ Կատարելով սոցիալական պատվեր, ֆրանսիական հակասովետական փորձագետները նպատակ ունեն ժխտել սոցիալիստական ինտերնացիոնալիզմի կենսահաստատ ուժը, թուլացնել ՍՄԿԿ ազգային քաղաքականության արդյունքների ազդեցությունը արտաքին աշխարհի, ամենից առաջ գաղութային լուծը թոթափած զարգացող երկրների վրա, նոր կռվաններ գտնել ապացուցելու, որ համաշխարհային հեղափոխական պրոցեսը իբր բնականոն, ինքնաբուխ պրոցես չէ, այլ դրսից՝ Սովետական Միության կողմից հրահրված «միջազգային տեռորիզմ», աշխարհում բռնի ուժով կոմունիզմ տարածելու ՍՄԿԿ քաղաքականության դրսևորում։*

*Ֆրանսիական բուրժուական հեղինակները, դիմելով Անդրկովկասում սովետական իշխանության հաստատման և երկրամասի ժողովուրդների կողմից իրենց սովետական ազգային պետականության ստեղծման պատմական իրադարձություններին, ազգերի ինքնորոշման իրավունքի բոլշևիկյան ըմբռնման բովանդակության խեղաթյուրման միտումով, ջանում են ապացուցել, որ այդ սկզբունքը պրակտիկայում չի իրագործվել Անդրկովկասի ժողովուրդների կողմից, որ սովետական իշխանության հաղթանակը Անդրկովկասում իբր թե Սովետական Ռուսաստանի կողմից Անդրկովկասի «նվաճման» արդյունք էր։*

*Կրկնելով «կարմիր իմպերիալիզմի» կամ «հեղափոխության արտահանման» կեղծ ու հակագիտական կոնցեպցիաների ավանդական դրույթները, Անդրկովկասում սովետական իշխանության հաստատման իրադարձություններին անդրադարձող ժամանակակից ֆրանսիական բուրժուական պատմաբանները մեկ մյուսի ետևից պնդում են, որ «հեղափոխությունը նվաճումով տարածելու քաղաքականությունը սովետական ղեկավարների համար պատահականության կամ էլ անհետևողականության պտուղ չէր»[1], որ Ադրբեջանում, Հայաստանում և Վրաստանում սովետական իշխանության «հաստատումը տեղի ունեցավ միմիայն և բացառապես շնորհիվ ճակատամարտերում կարմիր բանակի հաղթանակների»[2], որ «կարմիր բանակը իշխանության գլուխ բարձրացրեց տեղական կոմունիստներին, դրանով իսկ ազգերի ինքնորոշման լենինյան*

---

1 Veriche Djecgian, La révolution prolétarienne et la droit des peuples à disposer d'eux-mêmes („Haïasian", Fevrier, 1973, p. 5).

2 Marc Tougouchy, Le problème des nationalites en U. R. S. S. („Socialisme„ № 99, mai, 1970, p. 334.

քաղաքականությանը տալով խիստ սահմանափակ բովանդակություն»[3], որ «Լենինը, երբ համոզվեց, որ ազատություն ձեռք բերած ժողովուրդները միայն հարկադրանքով կմիանան Սովետական Ռուսաստանին, անցավ մեծապետական շովինիզմի դիրքերին»[4]։ Մարքսիզմի ռենեգատ Բ. Սուվարինը հավատացնում է, որ «Լենինը մի շարք տեղական հեղաշրջումների և կարմիր բանակի միջամտությունների օգնությամբ վերականգնեց կայսրությունը նոր՝ Սովետական Միություն անվամբ։ 1920 թ. ապրիլին կարմիր բանակը նվաճում է Ադրբեջանը։ Նույն թվականի վերջին տեղի է ունենում Հայաստանի բաժանումը, իսկ... 1921 թ. սկզբին կարմիր բանակը որոշեց Վրաստանի բախտը՝ այն սովետականացնելով բռնությամբ»[5]։ Ժամանակակից ֆրանսիական բուրժուական պատմագրության ամենատիտղոսավոր «փորձագետներից» մեկը՝ Փարիզի 1-ին համալսարանի պրոֆեսոր Էլեն Կարեր դ'Անկոսը փորձում է իր ընթերցողներին համոզել, որ Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի բուրժուազգայնական հանրապետությունների «հանկարծակի պարտությունը» պայմանավորված էր «օտարերկրյա աջակցության բացակայությամբ կամ էլ այդ օգնության թուլությամբ»։ Շարունակելով իր կեղծարարական մտքերը Է. Կ. դ'Անկոսը պնդում է, որ «կենսունակ և... անկախ Վրաստանը բռնի միության ենթարկվեց կարմիր բանակի կողմից»[6]։

«Հեղափոխության արտահանության» այս հակագիտական կոնցեպցիան պաշտպանում են Անրի Շամբրը, Արման Գասպարը, Ալեքսանդր Բենիգսենը, Սերժ Աֆանասյանը, Ֆրանսուա Խավիյեր-Կոկենը, Անահիտ Տեր-Մինասյանը, Բեռնար Ֆերոոն, Ժան-Պոլ Գրանիյեն, Բենուա Մեշենը և բուրժուական այլ հեղինակներ[7]։ Ձգտելով ապացուցել, որ սովետական իշխանությունը Անդրկովկասում հաստատվել է հակառակ հայ, վրաց և ադրբեջանական ժողովուրդների կամքի և ի վնաս նրանց ազգային շահերի, այդ հեղինակները իրենց «հեղափոխության արտահանման» կեղծ կոնցեպցիային գիտականակերպություն տալու և ինչ որ ձևով փաստարկելու միտումով ամեն կերպ գունազարդում են Անդրկովկասի բուրժուազգայնական հանրապետությունների պատմությունը, պնդելով, որ անդրկովկասյան ազգայնականների քաղաքականությունը համապատասխանում էր ժողովրդական մասսաների ձգտումներին, որ իբր «Հայաստանը փորձեց վերափոխվելու սոցիալիստական երանգավորում ունեցող հանրապետության՝ հաստատելով ընտրությունների բավականին դեմոկրատական սիստեմ»,[8] և որ «ստեղծվեցին ագրարային կոմիտեներ, և գյուղացիներին հող տրվեց»[9]։ Իսկ Ժնևի համալսարանի պրոֆեսոր Հ. Բաստերմաջյանը ավելի

---

3 Jeaques Levesque, U. R. S. S. et sa politique internationale, Paris, 1980, p. 45.

4 Marc Ferro, La revolution de 1917, Paris, 1976, p. 182.

5. Boris Souvarine, L' U. R. S. S. Puissance coloniale („La Revue de Paris„, № 7, 1955, p. 64).

6 Hèléne Carrere D'Encausse, L' Empire eclate-Paris, 1978, p. 14—15

7 Henri Chambre, Le marxisme en Union Soviétique, Paris, 1965, p. 308; Armand Gaspard, Caucase, Lausanne, 1969, p. 137; A. Benigsen, L'islame et l', Union Sovietique („Contrat Social„, Janvier, 1958, p. 9); Serge Afanasyan, L, Armenie, l' Azerbaidjan et la Georgie de l'independance a l'instauration du pouvoir sovietique (1917—1923),Paris, 1981, p. 241—242. Francois-Xavier Coqin, La revolution de 1917,Presses Universitaires de France, 1974, c. 22; A. Ter-Minassian, La république Arménienne 1918—1920 („Haïastan„, 1973—Janvier 1974); Bernard Ferron, Comment fut fonde en 1922 l' Union des republiqes socialistes Sovietiques („Le monde diplomatique„, № 106, fevrier, 1963, p. 10): Jean-Paul Granier, La fin de l' Empire Ottoman, Plon, 1973. p, 261; Benoist Mechin, Moustapha Koal ou la mort d'un empire,Paris, 1954, p. 269.

8 A. Ter-Minassian, Նշվ. հոդվ., էջ 9։

9 Hagop Sazdjian, Le 18 Fevrier („Haïastan„, fevrier, 1971, p. 2).

հեռուն գնալով գտնում է, որ «դաշնակցական կառավարությունը շանագրաբար ձեռնամուխ եղավ կազմակերպական և վերակառուցման աշխատանքներին, որոնք դրեցին տնտեսական զարգացման առաջին հիմքերը և որպես հետևանք 1920 թվականին զգալիորեն բարելավվեց հանրապետության տնտեսական դրությունը»[10]։

Այնուհետև կանխամտածված ձևով շրջանցելով կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ Անդրկովկասի բանվորների և աշխատավոր գյուղացիության դասակարգային անհաշտ պայքարը հանուն իրենց սոցիալական և ազգային ազատագրման, հանուն սովետական իշխանության, բուրժուական գաղափարախոսության փաստաբանները պնդում են, որ «Անդրկովկասի ժողովուրդները վճռականորեն հանգես էին գալիս բոլշևիզմի դեմ»[11], որ «բոլշևիզմը, լինելով բացառապես ռուսական ֆենոմեն, ազգային փոքրամասնություններից և ոչ մեկի մոտ... քիչ թե շատ լուրջ չափեր չընդունեց»[12], և որ «Հայաստանում բոլշևիկները չէին կարող հենվել ժողովրդի վրա, որ բոլշևիզմը Հայաստանում հաստատվեց միայն կարմիր բանակի ուժով»[13]։

Պատմական փաստերի անկողմնակալ ուսումնասիրությունը, անդրկովկասյան «դեմոկրատական» և «սոցիալիստական երանգի» հանրապետությունների տնտեսական և քաղաքական իրավիճակի վերլուծությունը համոզիչ հերքում են ֆրանսիական բուրժուական պատմաբանների մտացածին պնդումները և ցույց են տալիս, որ դրանք իրենց հիմքում բացարձակապես ոչ մի պատմական հող չունեն։

Դիմենք պատմական փաստերին։ Արխիվային փաստաթղթերից մեկում ասվում է, որ դաշնակցական կառավարության օրոք «երկիրը լիովին քայքայված է արտաքին ու ներքին մշտական պատերազմներից։ Երկրի բոլոր տնտեսական ռեսուրսները գնում են զորքի կազմակերպման և կերակրման վրա։ Երկրի տնտեսական զարգացման վրա ոչ մի ուշադրություն չի դարձվում. չկա տնտեսական ոչ մի քաղաքականություն, ժողովրդական տնտեսության կազմակերպման ոչ մի ընդհանուր պլան։ Կառավարությունը բացարձակապես չի ստեղծում պետական եկամուտների նոր աղբյուրներ, այլ ապրում է հումքի մնացորդների և թղթադրամների անվերջ տպագրման հաշվին, որոնց արժեքը այժմ ընկել է մինչև նրանց տպագրության վրա արված ծախսերի արժեքը»[14]։ Փարիզում լույս տեսնող «Վերածնունդ» ամսագիրը նույնպես ստիպված էր ընդունել, որ «Հայաստանի մեջ ապրանքների գները միջին հաշվով 25 անգամ բարձրացած են, կան վայրեր, մասնավորապես գյուղեր, ուր գները մինչև 100 անգամ բարձրացած են», որ «երկրում տիրում են գողությունն ու կաշառակերությունը։ Ոչ ոք կա, անշուշտ, որ փորձե արդարացնել այս ծանր իրողությունը։ Հասարակական ու բարոյական այլասերման երևույթ է այդ»[15]։ «Կավկազսկոյե սլովո» թերթի թղթակիցը Նոր Բայազետի գավառի բնակչության ողբալի դրության մասին հետևյալն էր հաղորդում. «Մեզ մոտ օր-օրի վրա դրությունը վատանում է։ Թանկությունը աճում է։ Կոշկեղեն և հագուստեղեն ոչ մի փողերով հնարավոր չէ ճարել, իսկ հացի 1 փթի գինը հասել է 420 ռուբլու։ Թեյ և շաքար չկա... Մշտական ուժասպառության և հյուծման պատճառով մեծ է մահացության տոկոսը երեխաների մեջ։ Մի կտոր հացի համար վաճառում են բացարձակապես ամեն ինչ՝ դռները և պատուհանները, հանում են տների տանիքները, գերանները։ Տները ծախում են ինչպես պատահի՝ ամբողջությամբ, մաս առ մաս, քանդված։ Քաղաքի և Նորադուզ, Բոշաքենդ, Կումալի գյուղերի

---

[10] H. Pasdermadjian, Histoire de l' Armenie, Paris, 1964, p. 422.

[11] Henri Chambre, նշվ. աշխ., էջ 295։

[12] Marc Tougouchy, նշվ. հոդվ., էջ 334։

[13] „Haïastan„, fevrier, 1970, p. 1.

[14] ՀՍՍՀ Հոկտեմբերյան հեղափոխության և սոցիալիստական շինարարության պետական կենտրոնական արխիվ, ֆ. 114, ց. 1, գ. 69, թ. 1։

[15] «Վերածնունդ», 13. VII. 1919, էջ 244, 30. X. 1919, էջ 530։

ամբողջ շրջաններ ամայության պատկեր են ներկայացնում։ Նրանց բնակչությունը մասամբ մահացել է, իսկ մի մասն էլ Բաթումի վրայով վերաբնակվել է Ռուսաստան։ Ծախված է ամեն ինչ, սպառված է ամեն ինչ։ Դաշտերի ընդհանուր տարածության միայն մեկ հինգերորդ մասն է ցանված։ Ֆիզիկական աշխատանքի պահանջարկ բացարձակորեն չկա»[16]։

Դաշնակցության տիրապետության շրջանում «գյուղատնտեսության արտադրությունը կրճատվեց 6 անգամ, անասունների գլխաքանակը՝ 2/3-ով, իսկ արդյունաբերական արտադրանքը՝ գրեթե 30 անգամ»[17], որի հետևանքով «սոցիալիստական երանգավորում» ունեցող այդ պետության մեջ ժողովրդական մասսաները բառացիորեն իրենց չքավորական գոյությունն էին քարշ տալիս, լիակատար անիշխանության, դաշնակցական խմբապետների բացարձակ ու անօրինակ թալանի ու սպանությունների, կյանքի ու անվտանգության տարրական երաշխիքների բացակայության պայմաններում։ «Ջնամյա տրուդա» էսէռական թերթն իր առաջին համարում տպագրել էր երիտասարդ դատական քննիչի նամակը, որը, գործի բերումով լինելով հայկական բազմաթիվ գյուղերում, գրում էր հետևյալը. «Հայաստանի գյուղերը ապրում են գյուղական կոմիսարների անասելի կամայականության, նրանց թալանի ու կողոպուտի, կաշառակերության պայմաններում։ Հայ գյուղացիները ակնառու կերպով համոզվել են, թե իրենցից ինչ են ներկայացնում հայկական «հեղափոխական» զորականությունը, բոլոր այդ խմբերը և լիազորները։ ...Հայկական գյուղը պատել է անթափանց խավարը։

Միայն ողջ ադմինիստրացիայի՝ սկսած գյուղական տեղամասային միլիցիոներներից ու գյուղական կոմիսարներից վերջացրած բարձրագույն պաշտոնյաներով, փոխարինումը հեղափոխականներով կարող է փրկել ժողովրդին լիակատար բարոյական քայքայումից։

Այսպիսին է գործերի վիճակը հայկական գյուղում»[18]։

Այս փաստերի լույսի ներքո պատմական իրականության նկատմամբ ծաղրանք է դաշնակցության ժամանակակից փաստաբանների պնդումներն այն մասին, թե իբր «պրակտիկորեն դաշնակցությունը հայ գյուղացիության, հայ ժողովրդի ազգային ձգտումների և հոգեբանության իսկական և փաստացի արտահայտիչն էր»[19]։

Ժամանակակից ֆրանսիական բուրժուական հեղինակներից ոմանք, հավանաբար, գիտակցելով դաշնակցականների հակաժողովրդական քաղաքականության բացահայտ գովերգության ապարդյունությունը, ստիպված են ընդունել, որ «դաշնակցական կառավարությունը չցուցաբերեց բանիմացություն։ Նա կառավարման համար ուներ մի պրեֆեկտուրա, բայց հավաքել էր մի ամբողջ կայսրության ադմինիստրացիա։

...Դաշնակցական կուսակցության լիդերները անխելահաս... կառավարողներ էին։ Բացի այդ, նրանց չէր բավականացնում հանդուրժողականությունը՝ կազմակերպվեցին պատժիչ արշավախմբեր այն գյուղերի դեմ, որոնք ձայն էին տվել հօգուտ սոցիալ-դեմոկրատական կուսակցության։ Վերջապես, որոշ մինիստրներ զբաղվում էին սպեկուլյացիայով»[20]։

Անդրկովկասում սովետական իշխանության հաստատման պատմությունը խեղաթյուրող ժամանակակից ֆրանսիական բուրժուական պատմաբանները առանձնակի փութաջանությամբ զբաղվում են վրաց մենշևիկների քաղաքականության և կառավարման ջատագովությամբ։ Սակայն այս դեպքում ևս

---

16 «Кавказское слово», 18. VII. 1919.

17 «Социалистическое строительство в Армянской ССР (1920—1940)», Ереван, 1940, с. 47, 64, 79.

18 Նշումը տե՛ս «Наше время», Баку, 18. IV. 1919.

19 H. Sazdjian, Le role des bolcheviques arméniens avant la Sovietisation de l' Armenie („Haïastan„, fevrier, 1974, p. 4).

20 Jean-Piere Alem, L' Armenie, Paris, 1959, p. 68.

պատմական անհերքելի փաստերի հետ առաջին իսկ ծանոթությունից ակնհայտ է դառնում, որ նրանք մենշևիկյան Վրաստանի պատմությանը նայել և նայում են դոմավոր ակնոցներով։ Աջ սոցիալիստ Մարկ Տուգուչին հավատացնում է, որ Վրաստանը «ընդհանուր ընտրական իրավունքի հիման վրա ստեղծված սոցիալիստական կառավարության օրոք անցկացրեց սոցիալական խոշոր բարեփոխումներ, ստեղծեց ժամանակակից պետություն, սոցիալիստական միլիցիա, կանոնավոր բանակ»[21]։

«Սոցիալ-դեմոկրատ» թերթը 1919 թ. հունվարին գրում էր. «Մեզ մոտ ընդունված է մտածել և ասել, որ Վրաստանի հանրապետությունը իրենից ներկայացնում է մի օազիս, որտեղ պահպանվել և նույնիսկ ամրապնդվել են հեղափոխությամբ նվաճված ազատությունները։

Սակայն... այդ բոլոր դատողությունները «մտացածին առասպել» են։ Իրականությունը ներկայացնում է շատ ավելի մռայլ, ծանր պատկեր, քան այն, ինչ տալիս են գոյություն ունեցող կարգերի ջատագովներն ու ներբողիչները։

Մամուլի ազատությունը պահպանվել է բավականին խղճուկ, ծաղրանքարային տեսքով... Դեմոկրատական հանրապետությունը այս առումով գերազանցել է ռուսական բռնապետությանը։

Քաղաքացիները ծեծված են, վախեցած, նրանք վախենում են ձայն հանել, չեն համարձակվում բողոքել։

Ժողովների ազատությո՞ւն։ Հավաքվել կարելի է, միայն իշխանությունների թույլտվությամբ...

...Ազգային փոքրամասնությունները նույն դրության մեջ հայտնվեցին, ինչ-որ հին ռեժիմի ռուսականացնող կառավարության օրոք»[22]։

Ոչ միայն Վրաստանի գավառներում, այլև մայրաքաղաքում սպանությունները ու կողոպուտը դարձել էին ամենօրյա երևույթ և աճում էին զարմանալի արագությամբ։ Իրեն սոցիալիստական հորջորջող վրաց մենշևիկների ստեղծած ադմինիստրացիան շատ դեպքերում «նույնիսկ հովանավորում է նրանց և ղեկավարում ավազակներին ու թալանչիներին։

Մենշևիկյան կառավարությունը ստեղծագործական աշխատանքում միանգամայն ողորմելի և անարդյունք դուրս եկավ։

...Կառավարող կուսակցությունը դեռևս չի ցանկանում խոստովանել իր անզորությունը։ Նա, ինչպես ջայլամը, թաքցնում է իր գլուխը իրանակության հանդեպ, չնայած, միևնույն ժամանակ, կուսակցության ղեկավարության մեջ նկատելի են բեկում և լիակատար հուսախաբություն։ ...Կառավարող կուսակցությունը կաթվածահար է եղած»[23]։ Վրաց մենշևիկները և նրանց հակաժողովրդական քաղաքականությունը երկիրը հասցրին տնտեսական քայքայման։ Գործարանների և ֆաբրիկաների մեծ մասը 1920 թ. աշնանը չէր աշխատում, ինֆլյացիան հասել էր 9 մլրդ ռուբլու[24]։ Ինքը՝ մենշևիկյան կառավարության նախագահ Ն. Ժորդանիան, 1920 թ. հոկտեմբերին կայացած տնտեսական խորհրդակցությունում ստիպված էր խոստովանել, որ «Վրաստանը տնտեսական աղետի է հասել»[25]։

Մուսավաթականների հակաժողովրդական քաղաքականության հետևանքով Ադրբեջանի տնտեսությունը ևս խոր անկման էր հասել։ Այսպես, 1920 թ. նավթի արդյունահանումը 1913 թ. համեմատությամբ 446 մլն փթից ընկավ մինչև 175 մլն փթի, գյուղատնտեսական կուլտուրաների ցանքատարածությունները կրճատվեցին 42, իսկ անասունների գլխաքանակը՝ 60%-ով։ 30 հազար գյուղացիական տնտեսությունները ավերվեցին։ Ադրբեջանի բնակչու-

---

21 Marc Tougouchy, նշվ. հոդվ., էջ 337։

22 Հղումը տե՛ս «Наше время», 12.I.1919.

23 «Кавказское слово», 6. V. 1919.

24 Г. Жвания, Великий Октябрь и борьба большевиков Закавказья за Советскую власть, Тбилиси, 1967, с. 266—267.

25 «Կոմունիստ», Բաքու, 3. XI. 1920։

թյունը կրճատվեց կես մլն մարդով[26]։ Բազմաթիվ փաստաթղթեր արտացոլում են ոչ միայն աշխատավորների աղքատացման անշեղ աճման պրոցեսները, այլև վկայում են այն լիակատար անարխիան ու կամայականությունները, որոնք անբաժանելիորեն թագավորում էին մուսավաթականների տիրապետության տրոք։

Բոլշևիկյան «Բեդնոտա» թերթում 1919 թ. ապրիլին զետեղված են բոլշևիկ Դ. Սուլթանովի հոդվածները, որոնցում նա անհերքելի փաստերով նկարագրում էր ադրբեջանական գյուղացիների անմարդկային շահագործումը կալվածատերերի և կուլակների կողմից։ Նա գրում էր. «Անշուշտ, այդպիսի կարգ գոյություն ուներ և նախկինում, սակայն այժմ կալվածատերերը և կուլակները իրենց գլուխները ավելի էին բարձրացրել, քան Նիկոլայի օրոք։ Նրանք այժմ ճնշում են ոչ թե ինչ-որ անհատի, այլ ողջ հասարակությանը։ Կալվածատերերի առաջին պահանջով գյուղացիները ձերբակալվում են ոստիկանության կողմից։ Գյուղացիները տնքում են շահագործման ծանրության, ծեծի, կաշառակերության և մշտական հալածանքների տակ։ Գրեթե ողջ ադմինիստրացիան կազմված է կասկածելի տարրերից, այսինքն՝ կաշառակերներից և անկարող ադմինիստրատորներից»[27]։

Այդպիսին էր պատմական իրականությունը մուսավաթական Ադրբեջանում։ Անդրկովկասի ժողովուրդների տնտեսական և հասարակական-քաղաքական կյանքի վերոհիշյալ իրողությունը դարձավ աշխատավորների դասակարգային ինքնագիտակցության աճի, նրանց քաղաքական սթափեցման, հեղափոխական ակտիվության ուժեղացման աղբյուրը։

Անդրկովկասի աշխատավորներն իրենց գառը փորձով համոզվելով, որ բուրժուազգայնական կառավարությունները ոչ միայն ընդունակ չեն, այլև չեն ուզում սոցիալական և ազգային զարգացման խնդիրները լուծել ժողովրդական ձգտումների ոգով, համոզվում էին, որ ստեղծված իրադրության մեջ միակ ելքը հակաժողովրդական այդ կառավարությունների տապալումն է և սովետական իշխանության հաստատումը։ Ժողովրդական մասսաների հեղափոխական ակտիվության ուժեղացման ֆոնի վրա նկատվում էր անդրկովկասյան բոլշևիկների՝ երկրամասի շահագործվող մասսաների շահերի իսկական և սկզբունքային միակ պաշտպանների հեղինակության և ազդեցության կտրուկ աճը։ Ս. Կասյանը ՌԿ(բ)Կ Կենտկոմին 1919 թ. ապրիլի 10-ին գրած նամակում տալիս էր Անդրկովկասի հասարակական-քաղաքական իրավիճակի հետևյալ նկարագրությունը. «Նկատվում է տրամադրությունների կտրուկ բեկում, տեղափոխություն դեպի ձախ։ Մենք արդեն թևակոխել ենք անվիճելի վերելքի շրջանը։ Բաքուն ալեկոծվում է, ստեղծվել է այսպես կոչված բանվորական կոնֆերանսը, ուր քննարկվում են ինչպես տնտեսական, այնպես էլ քաղաքական հարցեր։ Մեր ազդեցությունն աճում է ոչ թե օրերով, այլ ժամերով, իսկ մենշևիկների, էսէռների, դաշնակների տիրապետությունը հալվում է ձյան նման։ Վրացական գյուղացիությունը դյուրավառ նյութի վիճակում է։ Իսկ Հայաստանի սովի մատնված և մեռնող բնակչությունը, որը հույս ուներ իր ֆիզիկական փրկությունը գտնել անգլիացիների մոտ, համոզվել է այդ հույսի պատրանքային լինելու մեջ և նոր փրկություն է փնտրում»[28]։

Սովետական իշխանության հաստատման համար աշխատավորների մղած պայքարի ավանգարդում, ինչպես նախկինում, ընթանում էր Բաքվի բազմազգ պրոլետարիատը։ Դեռևս 1918 թ. դեկտեմբերին բուրժուական շրջաններն իրենց անհանգստությունն էին հայտնում այն կապակցությամբ, որ «Բաքվի բան-

---

26 Е. А. Токаржевский, Из истории иностранной интервенции и гражданской войны в Азербайджане, Баку, 1957, с. 330.

27 «Борьба за победу Советской власти в Азербайджане 1918—1920. Документы и материалы», Баку, 1967, с. 312—313.

28 Ц. П. Агаян, В. И. Ленин и создание закавказских советских республик, Ереван, 1976, с. 158.

վորները այժմ նորից սկսում են ենթարկվել բոլշեվիկյան ագիտացիայի հիպնոգինն»[29]։ Բոլշևիկների ագիտացիան գործուն ուժ ուներ, իհարկե, ոչ թե շնորհիվ հիպնոզի, և ոչ թե այն պատճառով, որ «այդ ագիտացիան ավելի հմուտ է։ Ոչ, բանն այն է, որ նրանց ագիտացիան ճշմարտացի էր»[30]։

1919 թ. Մայիսի մեկը Բաքվի պրոլետարիատը նշեց 50-հազարանոց քաղաքական ցույցով, որն անցավ Ադրբեջանում սովետական իշխանություն հաստատելու բոլշևիկյան լոզունգներով[31]։ Նույն թվականի հունիսի 13-ին Բաքվում «կոմունիստական կուսակցության որոշմամբ տեղի ունեցավ մեծ գործադուլ և հսկայական ցույց...։ Բանվորական դրոշակների վրա գրված էին՝ «Կեցցե սոցիալիստական հեղափոխությունը», «Կեցցե խորհրդային իշխանությունը», «Կեցցե 3-րդ ինտերնացիոնալը» լոզունգները»[32]։ Նկատի ունենալով այդ իրադարձությունները, ինչպես նաև բոլշևիկների օրավուր աճող ազդեցությունն ու հեղինակությունը, Բաքվի էսէռների «Ջնամյա տրուդա» թերթը հուլիսի 2-ի համարում ստիպված խոստովանում էր, որ «ոչ ոք չի կարող խափանել բոլշևիկյան շարժումը»[33]։

Սկսած 1918 թ. աշնանից ընդհուպ մինչև Ադրբեջանում սովետական իշխանության հաստատումը գյուղացիական շարժումը ավելի ու ավելի սերտորեն էր կապվում բանվորական հեղափոխական շարժման և բոլշևիկյան կազմակերպությունների հետ։ Ադրբեջանում տիրող իրադրությունը ճիշտ է արտացոլված ազգությունների ժողովրդական կոմիսարիատի ներկայացուցչի զեկուցման մեջ. «Այժմ Ադրբեջանը՝ Անդրկովկասում ապագա սովետական հեղափոխության օջախը, հեղափոխական խանդավառության եռացող կաթսա է։ 1918 թվականի նոյեմբերից մինչև այս տարվա փետրվարը չորս անգամ շրջեցի այդ երկրի մի ծայրից մյուսը։ Գյուղացիական մուսուլմանական մասսաների մեջ բոլշևիկյան տրամադրությունների տարերային աճը ապշեցուցիչ է։ Ոչ բոլշևիկյան տրամադրությունների չեմ հանդիպել։ Հեղափոխական լարվածությունը ցնցող է...։ Բոլորի հայացքն ուղղված է դեպի Մոսկվա...»[34]։

Ադրբեջանում, ինչպես ամբողջ Անդրկովկասում, նոր ուժով էր ծավալվում աշխատավոր գյուղացիության պայքարը սովետների իշխանության համար։ Այսպես, Ղազախի շրջանում գյուղացիները, զավթելով կալվածատիրական հողերը, ստեղծել էին սովետների ֆունկցիաներ կատարող գյուղացիական կոմիտեներ, իսկ 1919 թ. ապրիլին Լենքորանում և Մուղանում բոլշևիկների ղեկավարությամբ վերականգնվեց սովետական իշխանությունը, որը տապալվել էր 1918 թ.[35]։

Ադրբեջանի գյուղացիական մասսաների վրա բոլշևիկյան ուժեղ ազդեցությունը ստիպված էին ընդունել նույնիսկ մուսավաթական մամուլի օրգանները։ Այսպես, մուսավաթական կառավարության պաշտոնաթերթ «Ադրբեջանը» տագնապով գրում էր. «Ցավոք, բոլշևիկյան ագիտացիան գյուղերում մեծ հաջողություն ունի»[36]։

Այսպիսով, Ադրբեջանում մուսավաթականների իշխանության շրջանում դասակարգային շերտավորման և բևեռացման պրոցեսները հասել էին զարգացման այն անհրաժեշտ աստիճանին, որը Ադրբեջանում սոցիալիստական հեղափոխության և սովետական իշխանության հաղթանակը դարձնում էր հնարավոր, անհրաժեշտ և անխուսափելի՝ բացառապես դասակարգային ներքին ուժերի օգնությամբ։

---

29 «Наше время», 30. XII. 1918.

30 Վ. Ի. Լենին, Երկ, հ. 40, էջ 84։

31 «Կարմիր դրոշակ», Մոսկվա, 6. VII. 1919։

32 Նույն տեղում, 13. VII. 1919։

33 Հղումը տե՛ս նույն տեղում, 9. VIII. 1919։

34 А. С. Сумбатзаде, Социально-экономические предпосылки социалистической революции в Азербайджане, Баку, 1972, с. 212.

35 «Կարմիր դրոշակ», 29. VI. 1919, 3. VIII. 1919։

36 А. С. Сумбатзаде, նշվ. աշխ., էջ 210.

Չնայած դաշնակների դաժան տեռորին և բռնություններին, Հայաստանում արագ տեմպերով զարգանում էր բոլշևիկյան կազմակերպությունների և սովետական իշխանության համար աշխատավորների հեղափոխական պայքարի անշեղ աճման օրինաչափ պրոցեսը։ 1919 թ. ամռանը կուսակցական-կազմակերպչական աշխատանքների աշխուժացման հետևանքով գոյություն ունեցողների կողքին բոլշևիկյան կազմակերպություններ ստեղծվեցին Ղամարլուի, Դիլիջանի, Իջևանի, Կարսի, Կաղզվանի շրջաններում և Զանգեզուրի Խնձորեսկ, Գորիս, Տեղ, Ալիկուլիշ, Շինուհայր, Կարնիձոր, Շաղաթ, Բռնակոթ ու մի շարք այլ գյուղերում։ Մի խոսքով՝ 1919 թ. ամռանը ամբողջ Հայաստանի տարածքում գոյություն ուներ սովետական իշխանության համար աշխատավորների հեղափոխական պայքարը ղեկավարող մարտական կոմունիստական ընդհատակ[37]։

«Կարմիր աստղ» թերթի համաձայն 1920 թ. աշնանը Հայաստանի բոլշևիկյան կազմակերպությունները իրենց շարքերում միավորում էին «մոտ 3 հազար կազմակերպված անդամներ, չհաշված զորքը, ուր նույնպես կա ուժեղ կազմակերպություն։ Ամենածանր ու դժվարին պայմաններում, մինչև իսկ այն ժամանակ, երբ պառլամենտը ընդունեց մի օրինագիծ, որով կառավարությունը անխնա կռիվ հայտարարեց բոլշևիկների դեմ, կուսակցության աշխատանքը ոչ մի բոպե կանգ չառավ...

Ներկայումս Հայաստանի արհեստակցական միությունները, ինչպես օրինակի համար Ալեքսանդրապոլի արհեստակցական միությունների խորհուրդը, բոլոր երկաթուղային բանվորների միությունները վերածվել են բանվոր դասակարգի ռազմահեղափոխական կազմակերպությունների՝ գլուխ ունենալով կոմունիստական կուսակցությունը։

Կոմունիստական կուսակցությունը աճում է Հայաստանում և առաջ է գընում ուժեղ թափով»[38]։ Կուսակցական շարքերի նման մեծ աճը խոսում էր Հայաստանի աշխատավորների դասակարգային ինքնագիտակցության և հեղափոխական կազմակերպվածության աճի մասին։

Օբյեկտիվ գործոնների և բոլշևիկյան ագիտացիայի ազդեցությամբ զգալիորեն աճեց նաև Հայաստանի աշխատավոր գյուղացիության հեղափոխական ակտիվությունը[39]։ Գյուղացիական հուզումների վրա մեծ ազդեցություն թողեցին գյուղացիական համագումարները Ալեքսանդրապոլում, Ղարաբաղում, Ղազախում և այլուր, որոնք տեղի ունեցան իսկական ժողովրդական իշխանության՝ սովետների համար պայքարի դրոշի ներքո[40]։ Այսպես, 1919 թ. ապրիլի 18-ին Շիրակի գյուղացիական միության II համագումարը կտրականապես պահանջեց Հայաստանում հաստատել սովետական իշխանություն[41]։

Հայաստանի աշխատավորների՝ սովետական իշխանության համար անձնազոհ պայքարի վառ դրսևորում եղավ Մայիսյան հերոսական ապստամբությունը։ Չնայած այդ ապստամբությունը չպսակվեց հաղթանակով, բայց այն ակնհայտորեն ցույց տվեց, որ Հայաստանում սովետական իշխանության հաղթանակի համար բոլոր պայմանները հասունացել են։ Նույնիսկ դաշնակները ստիպված էին ընդունել բանվորների և աշխատավոր գյուղացիության հեղափոխական պայքարի ուժեղացումն ու ակտիվացումը, հայ բոլշևիկների աճող ազդեցության փաստը, այն ինչ որ այսօր համառորեն ժխտում են ժամանակակից ֆրանսիական բուրժուական պատմաբանները։ Այսպես, դաշնակցական մինիստր Ա. Ջամալյանը Ալեքսանդրապոլից վերադառնալուց հետո վկայում էր, որ «քաղաքը ամբողջովին բոլշևիկյան է, քանի որ բոլորը Հայաստանի սովետականացման կողմնակիցներ են։

---

37 Г. Б. Гарибджанян, Коммунистические организации Армении в борьбе за победу Советской власти, Ереван. 1957, с. 184.

38 «Կարմիր աստղ», Կրասնոդար, 11. XI. 1920։

39 Վ. Ա. Միքայելյան, Հայաստանի գյուղացիությունը սովետական իշխանության համար մղված պայքարի ժամանակաշրջանում (1917—1920), Երևան, 1960, էջ 80—180։

40 «Կարմիր դրոշակ», 15. VI. 1919, 29. VII. 1919։

41 Ц. П. Агаян, նշվ. աշխ., էջ 155.

...Նոր Բայազետից ներքին գործերի մինիստրությանը զեկուցում էին, որ բոլշևիկները գյուղացիների շրջանում մեծ հեղինակություն և ազդեցություն ունեին։

Դիլիջանից խմբապետ Սեպուհը զեկուցում էր, որ կոմունիստների կողմն անցած զինվորների թիվն օրեցօր աճում է, որոնք, վերադառնալով իրենց գյուղերը, այնտեղ հռչակում էին սովետական իշխանություն»[42]։

Այսպիսով, Հայաստանի բանվորները և աշխատավոր գյուղացիները համոզվել էին, որ հայ ժողովրդի թե սոցիալ-տնտեսական, թե քաղաքական և թե ազգային վերածննդի միակ ուղին երկրում սովետական իշխանության հաստատումն էր։ Հայաստանում սովետական իշխանության հաստատումն այն աստիճանի կենսական և անհրաժեշտ էր դարձել, որ այդ համոզմունքին էին գալիս նաև բոլշևիկների քաղաքական հակառակորդները։ Այսպես, հայ ժողովրդական կուսակցության նշանավոր անդամներից մեկը՝ Գ. Չալխուշյանը, խոստովանում էր, որ «ստեղծված իրադրության մեջ միակ ելքը իշխանության անցումն է մեծամասնականներուն»[43]։ Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստրը 1920 թ. սեպտեմբերի 20-ին Անդրկովկասում Ֆրանսիայի նոր գլխավոր կոմիսար նշանակված Շեվելյեին տված հրահանգներում նշում էր. «Հայաստանը՝ Անտանտի բարեկամը, այնուամենայնիվ մատչելի է բոլշևիզմի համար»[44]։

Գոյություն ունեցող կարգերի արմատական վերափոխման և հողային հարցի արդարացի լուծման բոլշևիկյան լոզունգները պարարտ հող էին գտնում նաև վրաց աշխատավոր գյուղացիության մեջ։ 1919 թ. վերջին կայացած զինվորական կազմակերպությունների բոլշևիկյան կոնֆերանսի պատգամավորներից մեկը վկայում էր. «Մեզ մոտ բոլոր գյուղացիները դժգոհ են հողային ներկա հարաբերություններից։ Հողը մեզ համար ամեն ինչ է։ Մենք լսել ենք, որ բոլշևիկները ճիշտ են լուծում հողային հարցը։ Մեզ մոտ բոլորը համակրում են բոլշևիկներին»[45]։ Բոլշևիկյան ագիտացիան նպաստում էր վրաց գյուղացիությանը ազատագրվելու ազգայնական պատրանքներից և օժանդակում նրա հեղափոխական պայքարի մասշտաբների աճմանը։ Այս առումով բավական բնորոշ է Գուրիայի օրինակը, որտեղ 1918 թ. մենշևիկյան ազդեցությունը շատ զգալի էր։ Սակայն արդեն 1919 թ. աշնանը գուրիական գրեթե յուրաքանչյուր գյուղում ակտիվորեն գործում էին աշխատավոր գյուղացիության հեղափոխական պայքարը մոբիլիզացնող բոլշևիկյան բջիջներ։ 1919 թ. հոկտեմբերի 27-ին մենշևիկյան կուսակցության Կենտրոնական կոմիտեն քննեց Գուրիայում տիրող վիճակը և հանգեց այն հետևության, որ «Գուրիան թողնվել էր առանց ուշադրության։ Բոլշևիկները ազատորեն գործում էին։ Նրանց պրոպագանդան մերից զորեղ է։ Մենք չարդարացրինք ժողովրդի հույսերը»[46]։

Արդեն 1919 թ. ամռանը Վրաստանում սկսվել էր «ամենաուժեղ գյուղացիական շարժում։ Մեծ է կոմունիստական կուսակցության հմայքը... Վրաստանի ժողովուրդը ներկայումս սպասում է բոլշևիկներին»[47]։ Վրաց գյուղացիության մարտական տրամադրությունների արդյունքը եղավ 1919 թ. Վրաստանում Հոկտեմբերյան զինված ապստամբությունը, որը մասսայական բնույթ էր կրում և ընդգրկեց շատ շրջաններ՝ Գորին, Թելավին, Սենակը, Լագոդեխին, Դուշեթը, Հարավային Օսեթիան, Աբխազիան, Զուգդիդին, Փոթին և Սամտրեդին։ Այդ ապստամբությունը նշանակալից տեղ է գրավում Անդրկովկասի աշխատավորների հեղափոխական պայքարի տարեգրության մեջ, և չնայած իր պարտությանը, ցույց տվեց Վրաստանի աշխատավորների վճռականությունն

---

42 «Очерки истории Коммунистической партии Армении», Ереван, 1967, с. 240—241.

43 «Արձագանք Փարիզի», 15. X. 1923։

44 Serge Afanasyan, նշվ աշխ., էջ 138։

45 Н. Б. Махарадзе, Победа Советской власти в Грузин, Тбилиси, 1965, с. 250.

46 Նույն տեղում, էջ 323։

47 «Կարմիր դրոշակ», 29. VI. 1919։

ու պատրաստակամությունը՝ մինչև վերջ պայքարելու սովետական իշխանության հաղթանակի համար։

Արմատական բեկում էր տեղի ունենում նաև Վրաստանի բանվոր դասակարգի գիտակցության մեջ։ 1919 թ. հունիսի 20-ին Թիֆլիսի «բանվորական խորհրդի նիստը պարզ ցույց տվեց, որ կոմունիստները բավականաչափ ազատ են գործում... Թիֆլիսի խորհրդում ժողովուրդը կտրականապես դեմ է մենշևիկներին։ Բանվորական այդ ամենանուրբ լսարանը իր միջից երևան է հանում մեծամասնական հռետորների, որոնք խոսում են կոմունիստների կողմից և խարազանում են մենշևիկյան քաղաքականությունը»[48]։ Միայն Թիֆլիսում «1919 թ. առաջին կեսին ամսական միջինը 3—4 գործադուլ էր տեղի ունենում։ 1919 թ. փետրվար-մարտ ամիսներին քաղաքային ինքնավարության բանվորների ու ծառայողների 12 հազարանոց գործադուլը դարձավ Թիֆլիսի պրոլետարիատի հեղափոխական աշխուժացման նոր աղբյուրը։ Գործադուլները բազմապատկվեցին Քութաիսում, Բաթումում, Փոթիում և այլ քաղաքներում»[49]։ 1920 թ. մայիսի 1-ին Թիֆլիսում, հակառակ մենշևիկների բոլոր ջանքերին, բոլշևիկների անմիջական ղեկավարությամբ տեղի ունեցավ բանվորների բազմամարդ ցույց, որն անցավ «Կեցցե Սովետական Ռուսաստանը», «Կեցցե Սովետական Վրաստանը» մարտական լոզունգներով։ Բաթումում մայիսմեկյան ցույցին մասնակցեցին 25 հազար աշխատավորներ, որոնք վճռականորեն պահանջում էին հաստատել սովետական իշխանություն։ 1920 թ. մայիսմեկյան տոնակատարությունները լայն թափ ստացան Չիաթուրիում, Քութայիսում, Փոթիում և այլուր[50]։

Այսպիսով, բոլշևիկյան կուսակցության ղեկավարությամբ ձեռք բերված միասնությունը բանվոր դասակարգի և աշխատավոր գյուղացիության միջև, նրանց մարտական դաշինքը և անկասելի ձգտումը դեպի հեղափոխական պայքարը ստեղծում էին Վրաստանում սոցիալիստական հեղափոխության հաղթանակի և սովետական իշխանության հաստատման համար անհրաժեշտ պայմաններ։ Այն, որ Վրաստանում սովետական իշխանության համար պայքարը աճում էր մեծ ուժով, վկայում է Կ. Կաուցկու՝ Թիֆլիսից մեկնելուց առաջ արած եզրակացությունը։ Նա երեք բառով արտահայտեց Վրաստանում տիրող իրադրությունը. «Անդրկովկասում բոլշևիզմը անխուսափելի է»[51]։ Հետաքրքիր է նշել և այն հանգամանքը, որ հար և նման կարծիքի էին նաև այն ժամանակ Թիֆլիսում գտնվող Ֆրանսիայի ռազմական և դիվանագիտական ներկայացուցիչները։ Այսպես, 1920 թ. հունվարի 15-ին Անդրկովկասում Ֆրանսիայի ռազմական կցորդ մայոր Նոնեն-Կուրն իր կառավարությանը հեռագրում էր. «Վրաստանում կառավարությունը կհաղթի բոլշևիկներին, եթե նա օգնություն ստանա դաշնակիցներից, եթե ոչ, ապա կխեղդվի տեղական բոլշևիզմի կողմից»[52]։

Այսպիսով, վերոհիշյալ փաստերի լույսի ներքո բացարձակորեն անհիմն են ժամանակակից ֆրանսիական բուրժուական պատմաբանների կեղծարարական պնդումներն այն մասին, որ սովետական իշխանությունը Անդրկովկասի ժողովուրդներին պարտադրվել է «արտաքին ուժերի» կողմից, որ «Կարմիր բանակը բռնությամբ զավթեց Ադրբեջանը, Հայաստանը և Վրաստանը»[53], որ նա «տապալեց ձայների 80 տոկոսի կողմից ընտրված սոցիալ-դեմոկրատական կառավարությունը Վրաստանում»[54], որ «Կարմիր զորքերը ցրեցին հայերին...

48 Նույն տեղում, 27. VII. 1919։

49 Г. Жвания. Նշվ. աշխ., էջ 15.

50 А. Н. Сургуладзе, Закавказье в борьбе за победу социалистической революции, Тбилиси, 1971, с. 419—421.

51 Г. Жвания, Նշվ. աշխ., էջ 304.

52 Serge Afanasyan. Նշվ. աշխ., էջ 93։

53 Renè Girault, Marc Ferro. De la Russie à I' U. R. S. S., Paris, 1974, p. 151.

54 Nicolas Romaney, Langues et nationalités en U. R. S, S. („Archives Europeenes de Sociologie„, t. XX, 1979, № 1. p. 114).

և խեղդեցին անկախ Հայաստանի այդքան կարճատև երազը»[55]։ Անհերքելի ու բազմազան փաստերը անկողմնակալ և օբյեկտիվ ուսումնասիրողին համոզիչ ապացուցում են, որ՝ 1) Ադրբեջանում, Հայաստանում և Վրաստանում սոցիալիստական հեղափոխության հաղթանակի համար անհրաժեշտ օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնները հասունացել էին նրա հաղթանակից դեռևս շատ առաջ, որ դասակարգային ուժերի հարաբերակցությունը բանվոր դասակարգի և աշխատավոր գյուղացիության օգտին էր, որոնց համար իրենց սոցիալական և ազգային ազատագրման համար մղվող պայքարում ուրիշ ուղի չկար բացի բուրժուաազգայնական կառավարությունների տապալումն ու երկրամասում սովետական իշխանության հաստատումը, 2) որ Անդրկովկասի կոմունիստներին, որոնք ժողովրդական մասսաների շրջանում մեծ հեղինակություն ու ազդեցություն ունեին, հաջողվեց մեկ հոսանքի մեջ միավորել անդրկովկասյան հերոսական պրոլետարիատի հեղափոխական պայքարը հանուն սոցիալիզմի, ամենամասսայական դասակարգի՝ աշխատավոր գյուղացիության, հեղափոխական-դեմոկրատական պայքարը հանուն հողի և ժողովրդական ամենալայն մասսաների ազգային-ազատագրական շարժումը հանուն ազգային ազատության և հավասարության, և ուղղել այն ընդհանուր նպատակի ձեռքբերմանը՝ Անդրկովկասում սովետական իշխանության հաստատմանը։

## ФАЛЬСИФИКАЦИЯ ИСТОРИИ ПОБЕДЫ СОВЕТСТКОИ ВЛАСТИ В ЗАКАВКАЗЬЕ В СОВРЕМЕННОЙ ФРАНЦУЗСКОЙ БУРЖУАЗНОЙ ИСТОРИОГРАФИИ

ЕРВАНД ГАСПАРЯН

### Резюме

Современные французские буржуазные историки—Э. К. Данкос, М. Ферро, А. Бенигсен, С. Афанасян, А. Шамбр, А. Тер-Минасян, Б. Феррон, Б. Мещен, Н. Романей и др., фальсифицируя историю борьбы трудящихся Закавказья за победу Советской власти, широко проповедуют концепцию «красного империализма» или «экспорта революции», не имеющую ничего общего с исторической действительностью.

Победа Советской власти в Закавказье была закономерным и прогрессивным явлением, результатом огромной мобилизующей работы большевиков Закавказья, героической и самоотверженной борьбы рабочего класса и трудового крестьянства Азербайджана, Армении и Грузии за свое социальное и национальное освобождение—за победу Советской власти.

---

[55] Benoist Mechin, նշվ. աշխ., էջ 269—270,